# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը /այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս տնօրեն Գ.Գևորգյանի մյուս կողմից

«ՋԱՎԱ » ԳՐՈՒՊ ՍՊԸ

/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը/

ՏՆՕՐԵՆ Զ. ՀՈՒՆԱՆՅԱՆ

/պաշտոն, անուն , ազգանուն /

«Դիզայն» մասնագիտության ուսանողների պրակտիկան անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը :

1. Ձեռնարկությունը /հաստատությունը ; կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան 30 տեղ հատկացնել ուսանողների ուսուսմնա-արտադրական պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխումը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատության , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

1.3 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման :Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր , նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին :

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է

1 ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց մեկ ամիս առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետ համաձայնեցնել պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում /սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության /հաստատության , կազմակերպության / տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի , հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար :

2.4. Պրակտիկան սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ նամակով ձեռնարկության /հաստատությանը , կազմակերպությանը / ներկայացնել պրակտիկա անցկացնող ուսանողների ցուցակը :

3 .Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է չորս տարի ժամկետով, սկսած 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը :

6 .Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում , երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ ռեկվիզիտները :

| | |
|---|---|
| ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ<br>2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ<br>ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ | « ԶԱՎԱ » ԳՐՈՒՊ ՍՊԸ<br>ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ<br>Գ. ՄԱՐՄԱՐԻԿ |
| ՀԵՌ. 060-27-32-32<br>Հ/Հ160254503016 | ՀՕՌ_____________<br>ՀՎՀՀ03017825 |
| ՏՆՕՐԵՆ_____________Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ | ՏՆՕՐԵՆ_____________Զ.ՀՈՒՆԱՆՅԱՆ |
| ՊՐԱԿՏ.ՂԵԿԱՎԱՐ_____________Կ. ՍԵՄԻՐՋՅԱ | |
| «______»_____________2021թ | «08»___01___2021թ |